

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀՈՒՆԱՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԴԻՈԴՈՐՈՍ Ա-Ի ՊԱՏԱՍԽԱՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ՝ ԱՊՐԻԼՅԱՆ ԵՂԵՌՆԻ 70-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ ՀՂԱԾ ՈՒՂԵՐՁԻ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Խորին կսկիծով հաղորդակից եղանք բովանդակությանը Ձերդ Վեհափառության 18 հունվար 1985 թվագրված հիշարժան նամակին, որ վերջերս ստացանք:

Ամբողջ սրտով վշտակցում ենք Ձեզ՝ եղեռնական այդ դեպքերի առթիվ, որոնք քսաներորդ դարում միլիոնավոր մարդկային էակներ տարան դեպի կոհասեղանը կրոնական ատելության, ազգային խտրականության և անբացատրելի վայրագության:

Մեր հայ եղբայրների կոտորածը ոչ միայն խորապես հուզեց մեր սրտերը, այլև հավիտյան պիտի մնա որպես խորհրդանիշ այն բանի, թե որքան աննշան է մարդկային քաղաքականության արժեքը, եթե այն հիմնված չէ Հիսուս Քրիստոսի վրա, որ կյանքի, սիրո և արդարության ճշմարիտ աղբյուրն է:

Մեր հույն ազգը, ավելի քան որևէ մեկը, հասկանում է դաժանությունը նրանց, ովքեր կատարեցին հայ ժողովրդի ցեղասպանությունը, քանի որ մեր ժողովրդի պատմությունը լի է հալածանքի և ջարդի ողբերգական դեպքերով:

Սա է պատճառներից մեկը, որ մենք, ի թիվս որպես քրիստոնյա Եկեղեցի մեր այլ պարտավորությունների, մշտապես մասնակցում ենք Հայկական Եղեռնի նահատակների հիշատակին նվիրված պատարագներին և հավաքներին, և ամեն տարի, ապրիլի 24-ին, մեր եպիսկոպոսներից մեկը իր շքախմբով պաշտոնապես մասնակցում է Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի մեջ տեղի ունեցող ամենամյա սգո հանդեսին:

Արդ, արտահայտելով մեր ցավակցությունը այդ պատմական ողբերգության առթիվ և կարեկից լինելով համայն հայությանն ու սառնասյալ ժողովրդին,

մենք ջերմեռանդ աղոթում ենք մեր Տեր Հիսուս Քրիստոսին, Նրա Սուրբ Գերեզմանից, որ խաղաղությամբ հանգիստ տա այս մարտիրոսների հոգիներին և խնդրում ենք Նրան, որ լուսավորի բոլոր նրանց, ովքեր կոչված են ղեկավարելու աշխարհը, որպեսզի տքնաջան աշխատեն՝ խաղաղության, սիրո և արդարության հաստատման համար:

Մնամք գորովագութ սիրով ի Քրիստոս՝

ԴԻՈԴՈՐՈՍ Ա
ՊԱՏՐԻԱՐՔ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

Երուսաղեմ,
17 օգոստոսի 1985 թ.